




1999

1

Եղիս. Կոստ. Շեշտութեան



ՅԱՅԿԱՆ ՀԱԳՅԵՄՔՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ՄԸՍԻՆ

(Արտատպած «Արձագանք» լրագրից 1892 թ.
№ № 136, 137, 139 և 145):




Թ. Կ Ֆ Լ Ի Ա

Տպարան Մ. Շարադէ, Կիկ. Փ. ա. 21

Տիպոգրաֆія М. Шарадзе, Никол. 21

1893



Дозв. цензурою, Тифлисъ, 25-го Февраля 1893 г.

326-60

25. 3. 9



ԾՈՒԽ

Ա.

Եկեղեցին, իրևե հասարակական հաստատութիւն, բայց իւր մէջ բովանդակող Սատուածալին զօրութիւնից, կարօտ է և՛ այնպիսի կազմակերպութեան, որ նպաստէր նրան, որքան հնար է, հասնելու իւր նպատակին: Մեր սուրբ Եկեղեցին այն Եկեղեցիներիցն է, որոնք պահպանել են քրիստոնէութեան հիմնական սկզբունքներից գլխաւորը — ընդհանրականութիւնն, որի շնորհիւ նորա մէջ ներդաշնակ միանում են Հեղինակութիւնն ու ազատութիւնը: Մեր Եկեղեցին իւր այս կազմակերպութեամբ է յաջողել հայ ազգին իւր քաղաքացիական ծառայութիւնը մատուցանելու և տալու նորան մտաւոր ազատութեան այն բնազդումները, որոնց ներկայացուցիչներ եղած են Եկեղեցու ամենաընտիր նուիրապետները:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ եկեղեցին իբրև հասարակութիւն կարող է կանոնաւորապէս գործել, երբ նորա նպատակայարմար կազմակերպութիւնն սկսվում է գիւղական եկեղեցու գաւթից և տարածվում է մինչև կաթուղիկոսական գահը:

Ծխերն են այն սազմերը, որոնցից կազմակերպվում է եկեղեցին, իբրև հաւատացելոց ժողով: Բնականաբար այդ ծխերի վիճակից կախուած է եկեղեցու կազմակերպութեան կենդանաբար զօրութիւնն ու բարեկարգութիւնը: Այս եկեղեցում, որ պահպանել է առաքելական աւանդութիւններ, և ուրեմն ժողովրդական է, ծուխը մի կենդանի և ամբողջ կազմուածք է, որ բաղկանում է եկեղեցականներից ու հաւատացեալներից: Այս կազմուածքի ինքնագործունէութիւնից և նորա կանոնաւոր կազմակերպութիւնից է կախուած և՝ ժողովրդի հոգեւոր կեանքը: Այնտեղ, ուր եկեղեցին ամբողջապէս բաղկացած է միայն կրօնաւորներից, ուր ծխերը զուրկ են որ և է ինքնուրոյնութիւնից և բաղկանում են բընաւ միմեանց հետ կապ չունեցող անհատներից, այնտեղ նկատվում է կրօնական կեանքի կատարեալ անկումն: Որպէսզի ծխական հասրակութիւնը մի կազմուածք լինի, գորա

համար հարկաւոր է նախ որ եկեղեցական դասուը միայնակ տէր չլինի եկեղեցուն և երկրորդ որ հոգուի ընտրութեան կարգը ճշդութեամբ համաձայն լինի այն արդարութեամբ է տուած Գործք Առաքելոցի վեցերորդ գլխում:

Այս ընտրողական սկզբունքը, որ այնպէս էական նշանակութիւն ունի, ինչպէս յայտնի է, լսվում է և՝ ձեռնադրութեան ժամանակ, երբ որևէ եկեղեցական պաշտօնէի կարգ է տրվում. Թէև այս սկզբունքը մեր եկեղեցում պահպանուել է յայսօր և քահանաները ձեռնադրվում են ժողովրդի ընտրութեամբ և խնդրով, բայց ընտրողական սկզբունքի այսպիսի գործադրութիւնը, այն արդիւնաւոր հետևանքները չեն ունենում, որոնք յատուկ պիտի լինէին այդ սկզբունքին: Ընտրողական իրաւունքը կարող է արդիւնաւոր հետևանք ունենալ, եթէ նորա հետ կապուած կըլինի և որոշ տուրքերի պարտական ութիւնը: Ծխի գիտակցական յարաբերութիւնը գէպի առաքելական շնորհաց արժանի եկեղեցական սպասաւորի ընտրութիւնը՝ միայն այն ժամանակ կարող է հնարաւոր լինել, երբ այդ իրաւունքն անխզելի կապով կապուած կըլինի պարտականութեան հետ, որով ընտ-

բողները նիւթապէս ապահովում են ընտրեալին: Այն ժամանակ ոչ ոք չի ստորագրիլ անձանօթ անձանց քահանալ ձեռնադրելու խընդիրը, և այսպէս կը հաստատուի քահանալի և ծխի մէջ այն անխզելի կապը, որին յաղթահարել չեն կարող և՝ «դրունք դժոխոց»:

Հասկանալի է որ ծխականների քահանայացու ընտրելը պիտի համաձայն լինի այն կանոններին, որոնցով սահմանվում է ընտրեալի յարմարութիւնը, իսկ այդ որոշում է ձեռնադրողը՝ առաքելու յաջորդ եպիսկոպոսը:

Նոյնպէս հակառակ է եկեղեցու ոգուն, երբ քահանալին մի ծխից տեղափոխում են միւս ծուխ, առանց ծխականներին հարցնելու, մանաւանդ երբ այդ կատարվում է իբրև պատիժ, զրկելով քահանալին հարուստ ծխից, տալիս են նրան աղքատ ծուխ. կարծես այս աղքատ ծուխը յանցաւոր է, որ գտնուել է մի անարժան քահանայ:

Պարզ է որ ծխի գործունէութիւնը չէ կարող և չպիտի սահմանափակուի լոկ եկեղեցականաց նիւթական ապահովութեամբ և եկեղեցու բարեգարդութեամբ: Քրիստոսի վարդապետութեան համաձայն ծխի անմիջական պարտականութիւնն է հոգացողութիւն ունենալ և երեխաների, անկարների ու աղքատ-

ների վրայ: Եթէ կարելի է հաստատել որ մեր ծխերը նպաստել են մասամբ ժողովրդի կրօնական բարոյական դաստիարակութեանը՝ ծխական դպրոցներ հիմնելով, պէտք է և այն խոստովանենք, որ մի քանի մասնաւոր բացառութեամբ, ծխական կանոնաւոր բարեգործութեան և կարօտելոց օգնելու գործում տակաւին շատ և շատ բան կալ անելու:

Բ.

Խօսելով եկեղեցական ծխերի կազմակերպութեան մասին, որոնց անդամները որոշ իրաւունքներ և պարտաւորութիւններ ունին, մենք ի հարկէ աչքի առաջ ունինք քաղաքները: Ինչ որ վերաբերում է գիւղերին, այս տեղ նոյն իսկ աշխարհագրական պայմանների շնորհիւ ծուխը կազմում է մի ուրիշ համայնք, որի անդամները հատուցանում են ճիշդ որոշուած տուրքեր թէ իրանց եկեղեցու միաբանութեան և թէ Ս. Եջմիածնի կամ տեղական վանքի օգտին: Յայտնի է որ շատ տեղ գիւ-

զերում բացի եկեղեցու միաբանութեան համար եղած ծախսերից առանձին ժողովարարութիւն է լինում և յօդուտ վանքերի, որոնք զուսագին» և «գաւազանապուղ» են կոչվում։ Այսպէս ուրեմն կանոնաւոր կամաւոր տուրք հատուցանելու իրաւունքը, որ այնքան մեծ և խորհրդաւոր հետեանքներ ունի, կատարելապէս պատկանում է գիւղական համայնքին։ Պէտք է նկատենք որ գիւղերում եկեղեցական տուրքերը հատուցանվում են միենոյն հիմանց վրայ և նոյն ձևով, ինչպէս պետական և հասարակական հարկերը։

Միանգամայն այլ կերպարանք ունի գործը մեր քաղաքներում։ Քաղաքի ծխականի էական զանազանութիւնը գիւղական ծխականից այն է, որ առաջինը չգիտէ բոլորովին թէ ումից է կազմուած իւր ծուխը և ոչ մի պարտաւորեցուցիչ տուրք չէ հատուցանում յօդուտ այդ ծուխի։ Ամեն ինչ թողնուած է ծխականի բարի կամքին։

Հազիւ թէ բնական, արդարացի կարելի լինի համարել իրերի այսպիսի գրութիւնը, երբ ազգի աւելի չքաւոր մասը՝ գիւղացիք, պարտաւորեցուցիչ տուրքեր է հատուցանում եկեղեցու պահպանութեան համար, իսկ աւելի ունեոր մասն ազատուած է ամեն այդ տե-

սակ տուրքերից։ Իրաւաբանօրէն կազմակերպուած ծուխը պէտք է վերջ դնէ այս անարդարացի զանազանութեանը։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ յօդուտ քաղաքացոց կարելի է մի բացառութիւն անել, որ գիւղերում չէ թուլատրվում, այն է ծխական չը համարել այն անձինքներին, որոնք կամաւորապէս ցանկութիւն չեն յայտնել եկեղեցական համայնքի անդամ լինել, որոնք հրաժարվում են որոշ տուրքեր հատուցանել յօդուտ եկեղեցական գործի, քանի որ այդ տուրքերի վճարման պարտաւորութեան հետ պէտք է անմիջապէս կալուած լինի ձայն ունենալու իրաւունքը ծխի գործերում։ Առանց պարտաւորութիւնների չկան իրաւունքներ—ահա ինչ պէտք է լինի եկեղեցական համայնքի նշանաբանը, ինչպէս և ամեն մի համայնքի։ Բուն քրիստոնէական ոգին ոչ մի ստիպումն չէ թուլ տալիս կրօնի գործերում և այս պատճառով ոչ ոքի չէ կարելի ուժի գորութեամբ հարկադրել մնալ ծխի մէջ, և եթէ նորանից դուրս ելնեն նոքա, որոնք հայ լուսաւորչական են միմիայն անցաթղթով, այս բանը կարող է միմիայն և եթ նպաստել եկեղեցական համայնքի մաքրուելուն այնպիսի տարրերից, որոնք մերժում են եկեղեցին, թէ

և ձգտում են գտնել ամենակարճ ճանապարհը դէպի եկեղեցական սնդուկը:

Ծխի կազմութիւնը պէտք է երկու գաղափար զանագանէ, որոնք պարունակվում են այս խօսքի մէջ՝ ծուխն իբրև համայնք և ծուխն իբրև հօտ: Հօտը կազմում են բոլոր ծխականները, առանց բացառութեան՝ կանաչք, երեխանները, աղքատները, որոնց եկեղեցին է խնամում և մինչև անգամ քաղաքացիական իրաւունքներից զրկուածները (սնանկներ, յանցաւորներ), իսկ եկեղեցական համայնքը, որպէս իրաւաբանական անձն, որ վարում է ծխի տնտեսական բարեգործական խըն. գիրները, կարող է բաղկացած լինել միմիայն այնպիսի անձինքներից, որոնք ընդհանուր օրէնքներով իրաւունք ունին հասարակական գործերին մասնակցել. այս մասնակցութիւնը ծխի նկատմամբ պէտք է սկայմանաւորուի նոյն իսկ ծխականների ժողովից սահմանուած եկեղեցական տուրքի հատուցմամբ: Ահա այս տուրք հատուցանողների թերթը ծխի գործող անդամների այն ցուցակն է, որոնց քահանայի հետ միասին պէտք է ձայնի իրաւունք պատկանէ ծխի բոլոր գործերում:

Ժամանակից հասարակութեան կեանքի ներկայ պայմաններում ծխերի գործունէու-

թեան գլխաւոր առարկաները, մեր կարծիքով, պէտք է լինին՝

ա) Ծխական եկեղեցու բարեգործութիւնը և պայծառութեան խնամքը:

բ) Միաբանութեան նիւթական ապահովութիւնն այնպիսի չափով, որ դէպի քահանայութիւն կարելի լինէր գրաւել ոչ միայն այնպիսի անձանց, որոնք իրանց բարուական յատկութիւններով համապատասխան են հովուի վեհ կոչման, այլ և կրթութեամբ հասարակութեան բարձրագոյն խաւերի մակերեւոյթի վրայ կանգնած լինէին:

գ) Սկզբնական կրթութեան ուսումնաբանների հիմնելը:

դ) Սղբատներին խնամելու գործը, որ քրիստոնէական դաւանութեան հիմնական հաւատալիքն է կազմում:

Պատճենագիր

Որքան էլ լաջորդաբար իրականանայ այն սկզբունքը, թէ ծուխը տուրքի յօժարակամ պարտաւորութիւն յանձն առնող մի համայնք է, թէ ծխի գործերում միայն եկեղեցական

տուրք վճարողներն իրաւունք ունին ներգործական մասնակցութիւն ունենալու, որքան էլ սահմանափակենք ծխի գործունէութեան շըջանը, ասում ենք մենք, այսու ամենայնիւնա չէ կարող իւր գործերն ինքը վարել և պէտք է մի առանձին մարմին ունենայ դորա համար, օրինակ՝ ծխական արքա և կառար առ ձութիւն, որ ընտրվում է ծխականներից: Ահա այդ հոգաբարձութիւնը պէտք է վարէ՝ հոգևոր իշխանութեան և ծխականների արթուն հսկողութեան ներքոյ, ծխի բոլոր գործերը, այն է՝ եկեղեցու բարեզարդութիւնը, եկեղեցու միաբանութեան բարորութիւնը, այլև ծխի գործոցական և բարեգործական գործունէութիւնը:

Ակներեւ է հարկաւ որ ամբողջ ծուխը չէ կարող ինքնին այդ գործերը վարել, ուստի և ծխականներից ընտրելով կազմակերպում է հոգաբարձական խորհուրդ, որ իւր գործունէութեան մասին հաշիւ է տալիս ծխականներին:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ ծըխական հոգաբարձութեան այս կամ այն կազմակերպութիւնը՝ հոգևոր իշխանութեան կողմից նպատակայարմար ճանաչուելուց յետոյ,

իրաւաբանօրէն պիտի որոշուի ու հաստատուի քաղաքական օրէնքով:

Արդէն 1874 թ. յուլիսի 12-ին Բարձրագոյն հաստատութեան արժանացաւ նախարարների յանձնաժողովի որոշած «Աստրախան քաղաքի աղքատ հայերի եկեղեցական հոգաբարձութեան վերաբերեալ կանոնադրութիւնը»:

Այդ հոգաբարձութիւնը բաղկացած է եօթն անդամներից, որոնցից չորսին ընտրում է երեք տարով Աստրախան քաղաքի հայոց եկեղեցեաց ծխականների ընդհանուր ժողովը, երկուսը մայր եկեղեցու և ա. Պօղոս-Պետրոսի երեցիոխաններն են և մէկը՝ թեմակալ առաջնորդի նշանակած քահանան. Հոգաբարձութեան անդամ ընտրուածներին հաստատում է առաջնորդը:

Յիշեալ կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն հոգաբարձութիւնը պարտաւոր է աշխատել՝ 1) միջոցներ գտնել Աստրախանի եկեղեցիներին կից ուսումնարաններ, անկելանոցներ և այլ աստուածահանոյ հիմնարկութիւններ հաստատելու համար, որոնց պահպանութիւնն էլ յանձնվում է այդ հոգաբարձութեանը, և 2) առհասարակ ըստ կարելւոյն

օգնութիւն հասցնել աղքատներին կարևոր դէպքերում:

Սորանից երեսում է որ Աստրախանի Հոգաբարձութիւնը ծխական գործունէութեան ենթակալ խնդիրների մի մասն է միայն Հոգում, այն է՝ դպրոցականն ու բարեգործականը. իսկ միւս մասը, որ ոչ նուազ կարևոր է, եկեղեցու բարեզարդութեան և միաբանութեան բարեկեցութեան խնդիրները — Հոգաբարձութեան գործունէութեան շրջանից գուրս են մնում: Աչքի առաջ ունենալով Աստրախանի Հոգաբարձութեան գործունէութեան այս յատուկ շրջանը, մանաւանդ որ նա բաւականին գումար ունի մասնաւորապէս աղքատներին օգնելու համար, 1874 թ. յուլիսի 12-ի կանոնները Հոգաբարձութեան նիւթական միջոցների աղբիւր են սահմանում յօժարակամ նուէրներն ու առանձին գանձաւնակները:

Այս կանոնադրութեան հաստատութիւնից մի տարի յետոյ, 1875 թ. Հոկտեմբերի 30-ին Բարձրագոյն Հաստատութեամբ Հրատարակութեալ իրեւ ընդհանուր օրէնք նախարարների յանձնաժողովի որոշումը՝ Ուսաստանի հայլուսաւորչական եկեղեցիներին

կից Հոգաբարձութիւններ հաստատելու մասին աղքատ հայերի համար:

Այս օրէնքը ներմուծուած է օրինագրքի մէջ որպէս XI հ., I մ., 1050 յօդ. յաւելուած, 1886 թ. շարունակութեան մէջ:

Այս օրէնքով որոշում է թոյլ տալ՝ ներքին գործոց նախարարի զեկուցման համաձայն 'ի պահանջել հարկին աղքատաց Հոգաբարձութիւններ հաստատել Ուսաստանի հայլուսաւորչական եկեղեցիներին կից, միայն այն պայմանով, որ Աստրախանի Հոգաբարձութեան 1874 թ. յուլիսի 12-ի հաստատութեան օրինակովը, այդպիսի Հոգաբարձութեանց առանձին կանոնադրութիւնների հաստատութիւնը կախուած լինի — Կովկասումն ու Անդրկովկասում Կովկասի փոխարքալի գլխաւոր վարչութիւնից, իսկ այլ տեղերում՝ ներքին գործոց նախարարից:

Եթէ մեր խօսքերն արձագանք պիտի գտնեն հայ հասարակութեան մէջ և մեր ծըխերը կը կամենան կազմակերպութիւն ունենալ, մենք խորհուրդ կը տալինք կանոններ ծրագրելիս աչքի առաջ ունենալ թէ Աստրախանի Հոգաբարձութեան վերաբերեալ օրէնքը և թէ 1864 թ. օգոստոսի 2-ին Բարձրագոյն հաստատուած՝ ուսաց եկեղեցիների Հո-

գաբարձութեանց «պօլօժենիէն»։ Այս կանոնադրութիւնն աւելի լայն ծաւալ ունի քան Աստրախանինը և թէ ծխի կազմակերպութեան ինդիրն է որոշում և թէ դրամական աղբիւրների վերաբերութեամբ աւելի լիակատար է քան առաջինը։

Այս «պօլօժենիէն» հիման վրայ հոգաբարձութիւնը պարտաւոր է։

1) Հոգալ ծխական եկեղեցու պահպանութեան և կարիքները լրացնելու մասին և միջոցներ գտնել եկեղեցական շինութիւնները վերանորոգելու և հների տեղ նորերը կառուցանելու։

2) Աշխատել որ ծխական հոգեորականութիւնն ստանալ իւր ապրուստի համար սահմանուած բոլոր միջոցները, իսկ եթէ պակասին՝ հնար գտնել շատացնելու այդ միջոցները։

3) Եկեղեցու միաբանութեան համար տըներ շինելու մասին հոգալ։

4) Միջոցներ գտնել ծխական դպրոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ, ապաստանաբաններ և այլ բարեգործական հաստատութիւններ հիմնելու, որոնց կազմակերպութիւնն ու կառավարելը նոյնպէս հոգաբարձութեան պարտքն է։

5) Առհասարակ օգնութիւն հասցնել ծխի աղքատներին կարեւոր դէպքերում, թաղել չքաւոր ննջեցեալներին և հանգստարանները կանոնաւոր կերպով պահպանել (§ 5):

Այս կանոնադրութեամբ (§ 6) եթէ յօժարակամ նուէրները չքաւեն հոգաբարձութեան բոլոր պիտոյքը հոգալու, հոգաբարձութիւնը՝ պատուաւոր ծխականների հետ խորհրդակցելով կարող է ծրագիր կազմել որոշ տուրք նշանակելու համար, որ կամ միանուագ է լինում կամ մշտական։ Այդ ծրագիրն առաջարկվում է ծխականների ընդհանուր ժողովի քննութեանը և ընդունուելուց ու այդ մասին վճիռ կայանալուց յետոյ՝ պարտ առ է բառնում բոլոր համաձայնութիւն տուողների համար։

Ծխականների ընդհանուր ժողովին մասնակցում են (§ 9) ծխի բոլոր տանտէրերը և օրէնքով հասարակական ժողովներին մասնակցելու իրաւունք ունեցողները, նմանապէս այն ծխականները, որոնց օգտակար կը համարէ հոգաբարձութիւնը հրաւիրել մասնակցելու այդ ժողովներին։

Մենք աւելորդ ենք համարում նորից կրկնել մեր վերոլիշեալ խօսքերը ծխի կազմակերպութեան նշանակութեան և կարեւորու-

թեան մասին: Հազիւ թէ մեր ընթերցողների մէջ գտնուի մէկը, որ ընդունակ լինի հերքելու այբակի կազմակերպութեան կարեռութիւնը ամեն մի գործում և ամբ ողջ հաստատութեան ամրութեան ու կենսականութեան կախումը նորա բաղադրիչ անհատների կենսունակութիւնից: Եկեղեցու վեհութիւնը, որ նպատակ ունի Աստուծոյ թագաւորութիւնը հաստատել երկրիս վրայ և կրօնն ազգերի խիզը դարձնել, հիմնուած է ծխերի վրայ, որոնցով պիտի իրականանայ մեր Փրկչի աւանդը:

Պ.

Աչքի առաջ ունենալով, որ մեր ընթերցողներից շտուելը ցանկութիւն են յայտնելի մօտոյ ծանօթանալ ծխական հոգաբարձութեանց մասին եղած այն օրէնքների հետ, որոնց վրայ մատնանիշ էինք արել «Ծուխ» վերնագրով յօդուածների շարքում, առաջ ենք բերում ամբողջապէս թէ այդ օրէնքները բովանդակող «պօլօժենիէն» և թէ այն Բարձրագոյն հաստատուած նախարարների ժողովի

որոշումը, որի գօրութեամբ թողարկում է այդպիսի Հոգաբարձութիւններ կազմակերպել Հայոց եկեղեցիների համար:

Այն ծխականներին, որոնք կը կամենան այդպիսի Հոգաբարձութիւններ կազմել, կը մնայ արտագրել իշխան պօլօժենիէն և որոշուած կարգով ներկայացնել ի հաստատութիւն պատշաճաւոր իշխանութեան:

Խակականի վրայ նՈՐԻՆ ԿԱՅՑՍԵՐԱԿԱՆ ՄԵծՈՒԹԵԱՆ յատուկ ձեռքով զրուած է.

«Եղիցի ըստ այսմ»:

Դ բացականացած:

Հ² Օգոստոսի 1864 ամի:

ԿԱՆՈՆԸ ԹՐՈՒԹՎԻՒՆ

ՈՒՂՂԵՓԵՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԺԱԽԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՈՒՆ:

(Կառավարիչ Սենատի օրէնսդրութեանց և կարգադրութեանց հաւաքածոյ 5 հոկտեմբերի 1864 ամի, № 78):

1) Ծխական եկեղեցու և եկեղեցական դասի բարեկարգութեան և բարեկեցութեան

Համար հոգ տանելու, որպէս և ծխի շրջանում սկզբնական կրթութիւնը կանոնաւորելու և բարի գործեր անելու համար հաստատվում են Ծխական Հոգաբարձութիւններ՝ բարեպաշտութեամբ և հաւատարմութեամբ դեպի ուղղափառ եկեղեցին յայտնի անձերից:

2) Հոգաբարձուները կազմուած են՝ եկեղեցու տեղական պաշտօնեաններից, որոնք նրա անհրաժեշտ անդամներն են, և ծխի ներկայացուցիչներից, որոնք ընտրվում են ծխականների ընդհանուր ժողովով (յօդ. 9) որոշ տարիների համար։ Իւրաքանչիւր Հոգաբարձութեան աշխարհական անդամների թիւը և նրանց ծառայութեան տեղութիւնը սահմանվում է ամեն մի ծխի հանգամանքներին նայելով, գիտութեամբ թեմական Առաջնորդի։ Երեցփոխանը Հոգաբարձութեան անհրաժեշտ անդամն է։ Գիւղական ծխերում հիմնուած Հոգաբարձութիւններին ընթերակալ են, որպէս անհրաժեշտ անդամներ, վօլոստի աւագները կամ տանուտէրերը. Եթէ մի ծխին պատկանում են մի քանի վօլոստների գիւղացիք, այն ժամանակ Հոգաբարձութեան մասնակից են այն վօլոստների բոլոր աւագները կամ տանուտէրերը. իսկ եթէ մի վօլոստի բնակիչները պատկանում են մի քանի ծխերի, այն

ժամանակ այն վօլոստի աւագը կամ տանութէրը այդ բոլոր ծխերի անդամ է։

3) Հոգաբարձութեան նախագահն ընտրվում է, ձայների բազմութեամբ, ծխականների ընդհանուր ժողովով հասարակաց հաւատարմութիւնը վայելող անձերից, հաշուելով դրանց մէջ և՛ ծխատէր քահանալին, որ ըստ 2-րդ յօդուածի յամենալին դէպս Հոգաբարձութեան անդամ է։ Հոգաբարձութեան նախագահին յատկացվում է ծխի Հոգաբարձուի կոչումն։ 'Ի դէպս բացակալութեան Հոգաբարձուի, նրա փոխարէն Հոգաբարձութեան մէջ նախագահում է ժամօրհնող քահանան։

4) Հոգաբարձութիւնները կարող են հրաւիրել ներկայ լինելու իրենց նիստերին, բացի անդամներից, նաև ուրիշ անձինք՝ ըստ իրենց հայեցողութեան։ Ծխական Հոգաբարձութեան քննութեան առաջարկուած խընդիրները վճռվում են ձայների բազմութեամբ. ձայների հաւասար բաժանման ժամանակ գերակառութիւն ունի այն կողմը, որին պատկանում է ժողովին նախագահողի ձայնը։ Հոգաբարձութեանց նիստերի ժամանակը, նրանց գբաղմունքների կարգը, պարտաւորութիւնների բաժանումն անդամների միջև և այլն, սահմանվում է նոյն իսկ Հոգաբարձութիւն-

ների որոշմամբ, հասցնելով, պէտք եղած դէպ-
քերում, ի գիտութիւն Թեմական Առաջնորդի:

5) Ծխական Հոգաբարձութիւնները պար-
տաւոր են հոգալ. ա) որ ծխական եկեղեցին և
ափահպանուի և նրա պէտքերը լրացուին և
միջոցներ գտնուին եկեղեցական շինութիւն-
ների մէջ հարկաւոր եղած նորոգութիւններն
անելու և քայլքայուածների տեղ նորերը կա-
ռուցանելու համար. բ) որ ծխի հոգեորական
դաւը վայելէ բոլոր իրեն յատկացուած ապ-
րաւոտի միջոցները, իսկ 'ի դէպս այդ միջոց-
ների պակասութեան՝ ջնարներ մտածուին այդ
միջոցներն աճեցնելու. գ) որ եկեղեցական
պաշտօնեաների համար տներ շինուին. դ) որ
միջոցներ հայթհայթուին ծխի մէջ դպրոց,
Հիւանդանոց, անկելանոց, որբանոց և ուրիշ
բարեգործական հաստատութիւններ հիմնելու
համար, որոնց շինելն ու կառավարելը նմա-
նապէս Հոգաբարձութեան պարտքն է. ե) որ
առհասարակ ծխի չքաւոր անդամներին, ան-
հրաժեշտ դէպքերում, կարելոյն չափ օգնու-
թիւն տրուի, նմանապէս և հոգ տարուի որ
չքաւոր ննջեցեալները թաղուին և հանգըս-
տարանները բարեկարգ վիճակի մէջ պահուին:

6) Ծխական հոգաբարձութիւնների դրա-
մական և առհասարակ նիւթական միջոցների

մերձաւոր աղբեւը համարվում են ծխական-
ների և եկաւորների յօժարակամ նուէրները:
Իւրաքանչիւր ծխում նուէրները հաւաքվում
են կամ դրա համար դրուած գանձանակնե-
րում, կամ առանձին հանգտանակութեամբ (սոռ-
քազրութեամբ). գանձանակները կարելի է
շրջեցնել և եկեղեցում: Ծխից դուրս նուէր-
ներ ժողովելու համար Թեմական Առաջնոր-
դը կարող է տալ ժողովարարութեան մա-
տեաններ: Նուէրները հաւաքվում են առան-
ձին. ա) յ գուտ եկեղեցու, բ) յօգուտ եկեղե-
ցու պաշտօնեաների և գ) յօգուտ ուսումնա-
րանի և բարեգործական հաստատութիւնների:
Եթէ այդ նուէրները պակասաւոր ճանաչուին
բոլոր կարիքները հոգալու համար, այն ժա-
մանակ Հոգաբարձութիւնը, ամենարգոյ ծխա-
կանների հետ խորհուրդ տեսնելուց յետոյ,
նախահաշվիւ է կազմում մի որոշ՝ ժամանա-
կաւոր կամ մշտական տուրք գնելու ծխա-
կանների վրայ, դրամով կամ նիւթով, եկեղե-
ցու պաշտօնեաներին նպաստ հասցնելու և
կամ ուրիշ պէտքերը հոգալու համար: Այս
նախահաշվիւն առտջարկվում է ծխականների
ընդհանուր ժողովի քննութեան և նրա ըն-
դունուելուց և այդ մասին վճիռ կայացնելուց

յետոյ՝ պարտաւորիչ է գառնում նախահաշուին հաւանութիւն տուղների համար:

Երբ որ ծխի բարեկարգութեան համար արքունի գանձարանի կամ հոգեոր և ուրիշ վարչութիւնների օժանդակութիւնը կամ նըպաստը հարկաւոր դատուի, Ծխական Հոգաբարձութիւնը միջնորդում է նրանց առջև այդ օժանդակութեան կամ նպաստի առթիւ:

7) Եթէ ծուխն արդէն ունի ծխական կամ մասնաւոր բարեգործական հաստատութիւններ, ինչպիսիք են օրինակի համար՝ Հոգաբարձական Խորհուրդները և կամ ծխի կարութեալներին օգնող ընկերութիւնները, հետանքանոցները, որբանոցները, ուսումնարանները և այլն, այն ժամանակ Ծխական Հոգաբարձութիւնները պարտաւոր են, առանց սահմանափակելու դրանց գործունէութիւնը, կարելոյն չափ աջակցել, որ այդ տեսակ հաստատութիւնները բարւոքուին և տարածուին:

8) Ծխական Հոգաբարձութիւնները, հասարակաց հաստատութիւններ լինելով, վայելում են Հոգեոր և աշխարհական իշխանութիւնների հովանաւորութիւնը: Նրանք, որպէս տեղական հասարակութեան գործիներ (օրգան), իրենց պաշտօնը կատարելիս պարտաւոր են անհրաժեշտ հրապարակութեամբ

վարել իրենց գործերը, խոյս տալով ամեն աւելորդ ձևականութիւններից: Տարուալ վերջը նրանք իրենց կատարած գործերի և տընտեսած գումարների և կայքերի նկատմամբ հաշիւ են տալիս ծխականների ժողովին, որից կախուած է հաշուետութեան եղանակի որոշումն և գրա վերաստուգութիւնը:

9) Ծխական Հոգաբարձութեանց Հոգալիք առարկանների քննութեան համար գումարուող օրթօդոքս ծխականների ընդհանուր ժողովները կազմվում են ծխի բոլոր տանտէրերից և ծխում տուն չունեցող, սակայն օրէնքով տեղի քաղաքալին կամ գիւղական հասարակութեան ժողովներին մասնակցելու իրաւունք ունեցող ծխականներից, կամ եթէ ազնուական են՝ ազնուականների ժողովներին մասնակցելու իրաւունք վայելողներից, որպէս և ուրիշ ծխականներից, որոնց Ծխական Հոգաբարձութիւնն օգտաւէտ կը դատէ հրաւերել մասնակցելու այդ ժողովներին: Ծխականների ժողովում ներկայ եղող իրաքանչիւր անձն մէկ ձայն ունի:

10) Ծխական Հոգաբարձութիւնը պարտաւոր է յօրինել և կարգին պահել Զ-րդ յօդուածի հիման վրայ ծխականների ընդհանուր ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող ան-

ձանց յատուկ ցուցակը: Նախապէս, Հոգաբարձութիւնների կազմուելուց առաջ, այդ ցուցակը յօրինվում է Եկեղեցու աւագ քահանայի ձեռքով, 10 ամենարդու ծխականների մասնակցութեամբ:

11) Ծխականների ժողովները գումարվում են Ծխական Հոգաբարձութեան նախագահի հրաւելով, իսկ 'ի դէպս նրա բացակայութեան՝ Եկեղեցու աւագ քահանայի հրաւելով, Հոգաբարձութեան յօժարութեամբ, և կայանում են նրանց վերահսկողութեան ներքոյ: Հրաւելուած ժողովի օրն ու գումարման տեղը և նրա նպատակը քահանան իմացնում է ծխականներին՝ այդ մասին ծանուցումն անելով Եկեղեցում, ժողովրդի բազմութեամբ առջև, ժողովից առաջ ընկնող երեք կիրակիներին և կամ տօն օրերին:

12) Ծխականների ժողովը կանոնաւոր է Համարվում, եթե նրան ներկայ են մասնակցելու իրաւունք ունեցող անձերի թուից ոչ նուազ քան մի տասներորդ մասը. ժողովի մէջ գործերը վճռվում են ձայների առաւելութեամբ և կայացած վէճի մասին արձանագրութիւն է կազմվում: Տուրք սահմանելու մասին տեսնուած որոշումները, որոնք պարտաւորիչ են միայն առ այն յօժարութիւն

յայտնողների համար, կանոնաւոր են դատվում, նոյն իսկ եթէ վերոյիշեալ թուից էլ պակաս անձինք ներկայ եղած լինին ժողովին:

13) Հոգաբարձութեան հաշուետութիւննու ուրիշ կարգադրութիւնները, ուակայն բացի Հոգաբարձութեան անդամների ընտրութիւնից, վերաստուգելու համար՝ ծխականները կարող են, նայելով ծխի ընդարձակութեան, Յից մինչև 15 հոգի փոխանորդներ կարգել երենց միջից:

14) Հոգաբարձութեան և ծխականների ընդհանուր ժողովի իրաւունքներից վեր դասուած խնդիրների վերաբերմամբ, որպէս և կասկածելի դէպքերում, Հոգաբարձութիւնը դիմում է Թեմական Առաջնորդին՝ խնդրելով նրա թույլտութիւնը կամ բանակցութիւնը ում հետ որ պէտք է բանակցել:

15) Այն ծխերում, ուր մի քանի ընտրողական անդամներից Հոգաբարձութիւն կազմելը նպատակին անյարմար կը լինէր, Հոգաբարձութեան պարտականութիւնները կարող են դրսւել Թեմական Սրբազնի հաստատութեամբ, ծխի մէջ առանձին յարգանք վարելով մէկ անձի վրայ, տալով նրան համապատահած իրաւունքներ և ծխական Հոգաբարձուի

կոչումն։ Այսպիսի լիազօրութիւն ստացած
մարդք, իւր գործողութիւնները վերոյիշեալ
կանոններին յարմարացնելով, ամեն անհրա-
ժեշտ դէպքերում կանխաւ միաբանվում է
տեղական եկեղեցու աւագ քահանայի հետ։

Ստորագրեց, Պետական Խորհրդում
Նախագահող Իշխան Պատել Գագարին։

Նախարարների Մասնաժողովի որոշմամբ,
որ Բարձրագոյն Հաստատուած է 30 հոկտեմ-
բերի 1875 ամի, սահմանուած է։

Թոյլ տալ ներքին գործոց նախարարու-
թեան կառավարչի առաջարկութեան համա-
ձայն՝ հիմնել ըստ պահանջելոյ հարկին Ռու-
սաստանի Լուսաւորչական թեմերի եկեղեցի-
ների մօտ աղքատ հայերին ինամող Հոգա-
բարձութիւններ, այն պայմանով, որ այդպիսի
Հոգաբարձութիւնների վերաբերեալ կանոնա-
գրերը, յարմարուելով Ստորախանի Հոգաբար-
ձութեան 12 յուլիսի 1874 ամի Հաստա-
տուած Կանոնագրին, կախուած լինի Կովկա-
սի և Անդրկովկասի երկրում Գլխաւոր Կառա-
վարութիւնից, իսկ Կայսրութեան միւս մասե-
րում՝ ներքին գործոց նախարարից։

ВЫПИСКИ ИЗЪ СВ. ЗАКОНОВЪ.

1050 ст. XI т., ч. I. св. Гр. зак., по пр. 1886 г.

Приимѣч. При церквахъ Армяно-Гри-
горіанскихъ епархіи въ Россіи разрѣшено учреж-
деніе попечительствъ о бѣдныхъ Армянахъ.

Пол. Собр. Зак. Рос. Им., 1875 г.

№ 55209.—Вследствіе ходатайства Святѣйшаго
Патріарха Католикоса всѣхъ Армянъ о пре-
доставленіи Начальникамъ Армяно-Гр. епар-
хій права учреждать церковныя Попечитель-
ства о бѣдныхъ Армянахъ, подобныя ВЫСО-
ЧАЙШЕ разрѣшенному Астраханскому церк.
Попечительству, управлявшій Мин. Внутр. Дѣлъ
входилъ о семъ съ представлениемъ въ Коми-
тетъ Министровъ, который полагалъ разрѣшить,
согласно съ представлениемъ его, Упр. Мин.,
учрежденіе, по мѣрѣ надобности, при церк-
вахъ Армяно-Гр. епархіи въ Россіи, Попечитель-
ствъ о бѣдныхъ Армянахъ, но съ тѣмъ, чтобы
учрежденіе отдельныхъ положеній о такихъ
Попечительствахъ, примѣнительно къ ВЫС. утв.
12 июля 1874 г. (П. Собр. уз., № 53722) Поло-
женію объ Астраханскомъ Попечительствѣ,
зависѣло въ Кавказскомъ и Закавказскомъ
краѣ отъ Глав. Управ. Намѣстника Кавказ-
скаго,—въ прочихъ же частяхъ Имперіи—отъ
Мин. Внутр. Дѣлъ.

Государь Императоръ въ 30 день Октября
1875 г. Положеніе Комитета Высочайше утвер-
дить соизволилъ.

На подлинномъ Собственномъ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА рукою написано:

Въ Ропшѣ «Быть по сему»
2 Августа 1864 г.

ПОЛОЖЕНИЕ

О ПРИХОДСКИХЪ ПОПЕЧИТЕЛЬСТВАХЪ ПРИ ПРАВОСЛАВНЫХЪ ЦЕРКВАХЪ.

(Собрание узаконений и распоряжений правительства, 5-го Сентября 1864 г., № 78.)

1. Для попечения о благоустройстве и благосостояніи приходской церкви и причта въ хозяйственномъ отношеніи, а также объ устройствѣ первоначального обученія дѣтей и для благотворительныхъ дѣйствій въ предѣлахъ прихода, учреждаются Приходскія Попечительства изъ лицъ, отличающихся благочестіемъ и преданностію вѣрѣ православной.

2. Попечительства состоятъ: изъ мѣстныхъ священнослужителей, которые суть непремѣнныи члены, и изъ членовъ отъ прихожанъ, избираемыхъ общимъ собраниемъ (ст. 9) на опредѣленное число лѣтъ. Число свѣтскихъ членовъ каждого Попечительства и срокъ ихъ службы опредѣляются, по мѣстнымъ обстоятельствамъ каждого прихода, тѣмъ же собраниемъ прихожанъ, съ доведеніемъ до свѣ-

дѣнія Епархиальнаго Архіерея. Церковный староста есть непремѣнныи членъ Попечительства. Въ Попечительствахъ, устроенныхъ въ сельскихъ приходахъ, присутствуютъ, въ качествѣ непремѣнныхъ членовъ, волостные старшины или головы; если къ одному приходу принадлежать крестьяне изъ несколькихъ волостей, то въ Попечительствѣ его участвуютъ все старшины или головы тѣхъ волостей; если же жители одной волости принадлежать къ изъ сколькимъ приходамъ, то старшина или голова той волости состоить членомъ Попечительствѣ всѣхъ сихъ приходовъ.

3. Предсѣдатель Попечительства избирается общимъ собраниемъ прихожанъ, по большинству голосовъ, изъ лицъ, пользующихся общимъ довѣріемъ, не исключая и мѣстнаго приходского священника, который, по ст. 2, есть во всякомъ случаѣ, непремѣнныи членъ Попечительства. Предсѣдателю Попечительства присваивается званіе Попечителя прихода. Въ случаѣ отсутствія Попечителя, вместо него въ Попечительствѣ предсѣдательствуетъ священникъ-настоятель приходской церкви.

4. Попечительства могутъ приглашать въ засѣданія свои, кроме ихъ членовъ, и другія лица по своему усмотрѣнію. Предлагаемые на обсужденіе Приходскихъ Попечительствъ предметы разрѣшаются по большинству голосовъ; въ случаѣ раздѣленія голосовъ поровну, имѣетъ

перевѣсь та сторона, на которой голосъ предсѣдательствующаго въ собраніи. Время засѣданій Попечительствъ, порядокъ ихъ занятій, раздѣленіе обязанностей между членами и т. п., опредѣляются самими Попечительствами, съ доведеніемъ, въ потребныхъ случаяхъ, до свѣдѣнія Епархіальныхъ Архіереевъ.

5. Приходскія попечительства обязаны заботиться: 1) о содержаніи и удовлетвореніи нуждъ приходской церкви и объ изысканіи средствъ для производства нужныхъ исправлений въ церковныхъ строеніяхъ и для возведенія новыхъ, взамѣнъ пришедшихъ въ упадокъ; 2) о томъ, чтобы приходское духовенство пользовалось всѣми предоставленными ему средствами содержанія, а въ случаѣ недостатка сихъ средствъ—объ изысканіи способовъ для увеличенія оныхъ; 3) объ устройствѣ домовъ для церковного причта; 4) объ изысканіи средствъ для учрежденія въ приходѣ школы, больницы, богадѣльни, прюта и другихъ благотворительныхъ заведеній, устройство и завѣдываніе коими лежитъ также на обязанности Попечительствъ; 5) вообще обѣ оказаніи бѣднымъ людямъ прихода, въ необходимыхъ случаяхъ, возможныхъ пособій, также о погребеніи неимущихъ умершихъ и о содержаніи въ порядке кладбищъ.

6. Ближайшимъ источникомъ денежныхъ и вообще материальныхъ средствъ для Приход-

скихъ Попечительствъ полагаются добровольные пожертвованія отъ прихожанъ и отъ постороннихъ. Пожертвованія въ своеемъ приходѣ собираются или въ выставляемыя для того кружки; или по особымъ подпискамъ; кружки могутъ быть обносимы и въ церкви. Для сбора пожертвованій въ предѣловъ прихода, могутъ быть выдаваемы Епархіальныи Архіереемъ сборныя книги. Сборъ пожертвованій производится отдельно: а) въ пользу церкви, б) въ пользу причта и в) для школы и благотворительныхъ учрежденій. Если бы таковыхъ пожертвованій оказывалось недостаточно для удовлетворенія всѣхъ потребностей, то Попечительство, по совѣщаніи съ почетнѣйшими прихожанами, составляетъ предположеніе о назначеніи опредѣленного сбора съ прихожанъ, единовременнаго или постояннаго, деньгами или натурою, для производства причту пособія или для другой надобности. Такое предположеніе предлагается на обсужденіе общаго собранія прихожанъ и, по принятіи его и составленіи о томъ приговора, дѣлается обязательнымъ для изъявшихъ по оному согласіе.

Когда для благоустройства прихода окажутся нужными какія либо пособія или содѣйствіе отъ казны, либо отъ духовнаго и другихъ вѣдомствъ, то Приходское Попечительство ходатайствуетъ предъ ними о таковомъ пособіи или содѣйствії.

7. Если въ приходѣ существуютъ уже при-

ходскія или частныя благотворительныя учрежденія, какъ напримѣръ Попечительные Совѣты или Общества для вспомоществованія приходскимъ бѣднымъ, больницы, пріюты, школы и т. п., то Приходскія Попечительства должны не стѣсняя ихъ дѣятельности, содѣйствовать, по мѣрѣ возможности, улучшенію и распространенію такихъ учрежденій.

8. Приходскія Попечительства, составляя общественные учрежденія, пользуются покровительствомъ духовнаго и гражданскаго начальствъ. Исполняя свои обязанности, какъ органы мѣстныхъ обществъ, они обязаны вести дѣла свой съ необходимою гласностю, устранивъ всякия излишнія формальности. По окончаніи года, они отдаютъ отчетъ въ своихъ дѣятельяхъ и въ завѣдываемыхъ ими суммахъ и имуществѣ общему собранію прихожанъ, отъ которого зависитъ опредѣленіе порядка отчетности и повѣрка оной.

9. Общія собранія прихожанъ православнаго исповѣданія по предметамъ вѣдомства Приходскихъ Попечительствъ составляются изъ всѣхъ домохозяевъ прихода и изъ прихожанъ, домами въ приходѣ не владѣющихъ, но имѣющихъ, по закону, право участвовать въ собраніяхъ мѣстного городского или сельскаго общества, или же кто принадлежитъ къ дворянскому сословію—въ собраніяхъ дворянства, а также изъ прочихъ прихожанъ, коихъ Приходское Попечительство признаетъ полезными

пригласить къ участію въ сихъ собраніяхъ. За каждымъ лицомъ, которое участвуетъ въ собраніи прихожанъ, считается одинъ голосъ.

10. Всѣмъ лицамъ, имѣющимъ, на основаніи ст. 9, право присутствовать въ общемъ собраніи прихожанъ, долженъ быть составленъ и содержимъ въ исправности Приходскимъ Попечительствомъ особый списокъ. Первоначально, до образования Попечительствъ, списокъ сей составляется священникомъ-настоятелемъ церкви, при участіи 10 почетнѣйшихъ изъ прихожанъ.

11. Собранія прихожанъ созываются предсѣдателемъ Приходскаго Попечительства, а въ отсутствіи его — священникомъ-настоятелемъ церкви, съ согласія Попечительства, и происходятъ подъ ихъ наблюденіемъ. О днѣ и мѣстѣ назначенаго Собранія и цѣли оваго священникъ извѣщаетъ прихожанъ, объявляя о томъ въ церкви, при стеченіи народа, въ три предшествующіе собранію воскресные или праздничные дни.

12. Собраніе прихожанъ признается правильнымъ, когда въ ономъ было не менѣе одной десятой части лицъ, имѣющихъ право въ немъ участвовать; дѣла въ собраніи решаются по большинству голосовъ и о послѣдовавшемъ решеніи составляется приговоръ. Приговоры объ установленіи сбора, обязательного только для изъявившихъ на оный согласіе, признаются правильными, хотя бы собраніи было и менѣе означенаго выше числа лицъ.

13. Для повѣрки отчетности Попечительства и для другихъ распоряженій, кромѣ, однакожъ, выбора членовъ Попечительства, прихожане могутъ назначать изъ среды себя уполномоченныхъ отъ 3 до 15 человѣкъ, смотря по обширности прихода.

14. По предметамъ, превышающимъ права Попечительства и общаго собранія прихожанъ, равно и въ сомнительныхъ случаяхъ. Попечительство представляетъ Епархіальному Архиепулю на разрѣшеніе или для сношения съ кемъ слѣдуетъ.

15. Въ приходахъ, въ коихъ учрежденіе Попечительствъ изъ нѣсколькихъ выборныхъ членовъ оказалось бы неизримѣннымъ къ дѣлу, обязанности Попечительства могутъ быть возлагаемы, съ утвержденія Епархіального Преосвященнаго, на одно лицо, пользующееся особыннымъ уваженіемъ въ приходѣ, съ представлениемъ ему соотвѣтственныхъ тому правъ и званія Приходского Попечителя. Таковое уполномоченное лицо, сообразя свои дѣйствія съ означенными выше правилами, входитъ, во всѣхъ необходимыхъ случаяхъ, въ предварительное соглашеніе съ настоятелемъ мѣстной церкви.

Подписанъ: Предсѣдательствующій въ Государственномъ Совѣтѣ

Князь Павелъ Гагаринъ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0247734

